

այն էլ խիստ արդիւնաւոր կերպով այնպէս որ նոցա կովկ. ոտ դրած օրից հազիւ անցել էր 10 տարի և գորոց վիճակազրութիւնը ցոյց է տալիս, որ այդ կարծ ժամանակամիջոցում թէ արական և թէ իջական սեռի գորոց յաճախողների թիւը եռապատկուել էր—այնպէս որ երկու սեռից կրթուողների թիւը 55.084-ի էր հասնում, որի համար տարեկան ծախտուում էր 818.625 ր.՝ 90 կոպ.

1877-ին վրայ է հասնում ոռու—թբքական պատերազմը և կանգ է առնում լուսաւորութեան գործի յառաջադիմութիւնը, այլ և շատ տեղեր խանգարուում ու փակուում են գարոցները. պատերազմին հետեւում է լինուականների ապլատամբութիւնը, որը գարձեալ առիթ է դառնում մի քանի գպրոցների փակման, ինչպէս նուխում, Զաքատալում են, բոլոր ձեռք առնելիք միջոցները առ ժամանակ դագարուում են, մանաւանդ գանձարանն էլ չէր կարող իւր նպաստը հասցնել կանոնաւոր:

Պատերազմից յետոյ վարչութեան յատուկ ջանքով ոչ միայն փակուած գարոցները բացուեցան, այլ և գպրոցական գործը աւելի սկսեց արագ առաջ գնալ. զիսաւորապէս ջանքեր եղան կովկասում գըտնուած ուսումնարանները գպրոցների հոգարածութեան տեսչութեան ենթարկել և վերջացնելով մէջտեղից մանաւոր բնաւորութիւն ու ծրագիր ունեցող ուս. Հիմնարկութիւնները բոլորը որոշ կարգի գըպրոցների վերածուեցան: Ա. երջին 1895-ի կովկ. գըպրոցների վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ նա մի քայլ ևս արել է յառաջադիմութեան գործում: 1885-ին բոլոր գըպրոցների թիւը եղել է 1.018, ծառայողների 3.898, ծախս 2.350.378 ր.՝ իսկ աշակերտաց թիւը 66.119. իսկ եթէ տարբեր գաւանութեանց և մանաւոր գարոցներում սովորողների թիւն էլ վերան աւելացնենք՝ կունենանք 99.109. 1895-ին պետական գըպրոցների թիւը հասնումէ 1.297. մինչ ծախսը տարեկան 3.466.883 ր.՝ և ուսանողաց թիւը 91.692. եթէ ոչ պետական գըպրոցներն էլ առնելու լինենք՝ ուսանողաց թիւը հիասնի 149.973 հոգու. (սորո մէջ պիտի հաշուել և 16.066 ուսանողներ Հայոց եկեղեցական—ծիսական ուսումնարաններից):

Այժմ եթէ մի հայեացք ձգենք 100 ամեայ կովկ. գըպրոցական կեանքի վերայ, կտեսնենք, որ նա տարեց տարի յառաջադիմել է, որբան որ ներել են տեղական հանգամանքները. 10.000 բուրլուց ծախսը բարձրացել է 3.466.883 բուրլու. գըպրոցում՝ սկզբում 10 աշակերտ չի գտնուել, յետոյ ուսանողաց թիւը հասել է 141.973-ի. անշուշտ սրանք շօշափելի յառաջադիմական քայլեր են, բայց եթէ համեմատենք կովկասի կրթական կան գործը ուրիշ երկիրների հետ, նա մեծ զրօն հաւասար մի բան կերւմի. օր. Ամերիկայում 1000

մարդուն գալիս է 208 ժող. գպրոց աշակերտ. Անդ. 161. Գաղղիայում՝ 146. Եւրոպ. Առաջ. 30. իսկ Կովկասում միայն 8, Ամերիկայում կրթութեան գործին մարդագլուխ ծախսուումէ 4 ր. 65 կ. Անդ. Յթ. Գաղղիայում 2. իսկ Կովկ. 14 կոպէկ. Ուրեմն ինչ զարմանք, որ գեռ Կովկ. ժողովուրդը Խորին խաւարով ծածկուած, ոչ միայն չի կարողանում արդիւնաւորել և շահագործել երկրի անհատնում հարստութիւնն ու բարիքը, այլ և մեծամասնութիւնը յետին աղքատութեան մատնուած, զոհ ամեն տեսակ պատահարների, հազիւ կազզանում է իւր օրական հացը հայթայթել. իսկ նորա հարրատութիւնը օտարն է վայելում: Ա. երջացնում ենք մեր խօսքը ամսաթերթի բառերով. «Կովկասին պէտք է գորոց, առանց որոյ անկարիլի է ոչ կուլտուրա և ոչ արդիւնաբերութիւն»:

Ս. Յ.

ՕԳԻ ՄԱՔՐՈՒԹԻՒՆԸ

ԱԹԱՊ. ԶՈՒԹԵԱԸՆՆ ՀԱՄԱՐ *

Պայիս է ամառը և բերում է շատ շատ բարեաց հետ միասին և ոչ քիչ շարիքները որոնց մէջ եթէ ոչ ամենաառաջին, զոնէ տուաջին տեղերից մինը պէտք է տանք փոշուն, որով այնքան կարող էին պարծենալ մեր զիւղերն ու քաղաքները:

Եիրաւի միշտ մարդ՝ աչքն ու բերանը բանած՝ ման և զալիս օրուայ որոշ ժամանակներին, երբ քամին մրրկում է օզը և փոշու ամզերը ոլորապատյա զրօսնում են փոշոցների երկարութեամբ, երբեմն անցորդին ոտից զլուխ ներկում և երբեմն էլ ճանապարհոց շեղուելով՝ գոնից և պատուհանից ներս մանում տուն:

Բայց առողջապահների հետազօտութիւններից երեւում է, որ մենք շատ քիչ պիտի վախենանք փողոցի այդ կատաղի մշնամուց, քան մեր տան սենեակների հեղարայ անսեսանելի մանր բարեկամներից, վերջինների հասցրած վնասների ոչ չափը և ոչ տեսակները կարելի է մի առ մի թուել: Սենեակի փոշուն պիտի վերադրել մարդկային հիւանդութեանց պատճառներից 10-ից 9-ը:

* Քաղուած „Հետակա շաբաթաթերթից:

Փոշին ներգործումէ մարդուս վերայ զանազան տեսակ. նա զրգուում է կաշին փակում է կաշու և թռքերի ծակութիքները, աղջում է շնչառութեան գործարանների վերայ և օգնում է փոփոխական հիւանդութեանց տարածուելուն, այս վերջին տեսակետից ամենավտանգաւորը պետք է համարել հնդկանական կոչուած փոշին, որ նեխած մարմինների մասերիցն է, և կամ վնասակար բակտերիաներ ու նոցա սալմերը:

Միայն մօտից ծանօթը կարող է երեակայել թէ քանի՛ քանի՛ հաղարաւոր մանր մունք մարմիններ լողում են մեր սենեակի մաքուր կարծած օդի մէջ: Մ'էկ ու կէս մատնաչափ խորանարդ օդի մէջ 300,000 փոշու մանրամաղ մասնիկներ կարող են լողալ և գարձեալ օդը իւր թափանցկութիւնը չի կորցնի:

Որովհետեւ կենդանական փոշին ամենից վնասակարն է համարուել, ուստի ամենից շատ էլ նա է հետազօտուել: Մինչդեռ ձիւնապատ լեռների գաղաթում կամ ծովեղրից որոշ հեռաւորութեան վերայ 10 խորանարդ մետր օդի մէջ հազիւ 5—6 բակտիրիաներ են գտել քաղաքներում ու գիւղերում գրանց թիւը միլիարդների է հասնում, ուրեմն և ամեն տեսակ հիւանդութեանց իսկական գործարան գտանում:

Որքան երջանիկ պիտի համարենք գիւղացոց, թէև նոքա կիզիչ արեգակի տակ ծանր աշխատանքով ամրողջ օրեր են անցկացնում դաշտերում եթէ համեմատենք դաշտի օդը զանազան գործարաններում բանելու դասապարտուած ողորմելիների հետ: Մանաւանդ դժբաղդ պիտի համարել մետաղների ու հանքերի վերայ աշխատաղներին, որովհետեւ այսուեղ 100-ից 80-ը վաղաժամ և ոչ իրենց հնական մահով են մեռնում: Հյիշենք և այն, որ այդ մարզիկը ենթակայ են այնպիսի սուր ցաւերի, որի մասին գաղափար անգամ չենք կարող կազմել: Դաշտում աշխատող գիւղացին քիչ շափով չե շարժում սենեակում նստական պարագմունքի տեր անձանց նախանձը, եթէ վերջինները մի բոսի տեսնեն, թէ ինչպէս ապականուած է այն օդը, որի մէջ նոքա ստիպուած են ժամերով նստել ու աշ-

նստել: Աննկատելի կերպով այդ անտեսանելի և մշտաշարժ կենդանական փոշին թափանցում է թռքի բոլոր ծակերը բանում ու արգելում աղաս շնչառութիւնը: իսկ այդ բանին անտեղեակ մարդը ու լից տեղ է փրնուռում իւր կրծքի զանազան հիւանդութիւնների պատճառը:

Այս կողմից բազմաթիւ անդամներով, բայց քիչ սենեակներով տան տէրը ամենից աւելի թող վախենայ փոշու հասցրած աղետներից:

Ապացուցուած է, որ բոլոր միւս պայմաններում բնակչաց թուի կրկնապատկումը քառապատիկ մահուան պատճառ է գառնում: Եւ այս տոկոսը տակիս են ոչ թէ բանտերում ապրողները կամ աղքատները, այլ և այն հարուստները, որոնք քիչ են ուշք գարձնում այս կէտի վերայ: ախորժակի պակասութիւն, կենսական ոյժերի անկումն, շարունակ կրկնուող հիւանդութիւններ, գանդաղութիւն, շարժումների հաստատ ապացոյցներ են օդի մէջ լողացող վնասակար փոշինների:

Աչքի առաջ պիտի ունենանք, որ սենեակի օդի մաքրութիւնը շատ բանում կախումն ունի և բնակուողից: առողջ մարդը սովորական պայմաններում աւելի քիչ է ապականում օդը, քան հիւանդը: շորերի և մարմնի մաքրութիւն, յածախ լուացումն ուների, քըրանած մասերի յատուկ իննամք, սպիտակեղենի շուտ շուտ փոփոխութիւն ամենահարեւոր միջոցներ են օդի մաքրութեան համար: հարկ է սրա վրայ աւելացնել տան, սենեակների, կահկարասեաց մաքրութեան և յատուկ լաւ օդանցքների պահանջը: Հարկաւ ոչ ոքի անցայտ չէ, որ տան օդը մաքրուում է նախ գոների ու պատուհանների, պատերի և առաստաղի միջոցներով, որից երեսում է, թէ որքան անհրաժեշտ է յատուկ ուշք գարձնել ոչ միայն տան յարմարաւոր շինութեան, այլ և նիւթի ընտրութեան վերայ: Ապացուցուած է, որ տան ներկած պատերը արգելում են օդի ներս թափանցելուն, պակաս արգելք չէ և թղթէ պաստառը: ամենից առողջապահական համարուում է տան պատերը պարզապէս գաճով ծածկել:

Բայց օդը մաքուր պահելու հոգաարու-

թիւնը շատ և շատ յառաջ է գնացել արուեստագիտութիւնը կատարելագործութեան է հասցրել օգանցքների կազմութիւնը. այնպէս որ այդ կողմից կարելի էր գաղափարական բնակարան շինել: Բայց ի զուր էր յուսալ թէ այդպիսի բնակարանի մէջ մաքրութիւնը կարելի կը լինէր գաղափարականի հասցընել: Լաւ օգափոխութիւնը ինչպէս լաւ, այնպէս էլ վատ, ապականուած օգը կարող է ներս ընդունել նայելով՝ թէ տան շրջապատը ինչ տեսակ օգով է բռնուած:

Տան ներքին յարկերը, մառանատունը, շրջապատի ալքատ ու կեղտոտ խրձիթները այնպիսի պայմաններ են, որ մաքուր օդ փնարբողը ամենից առաջ նրանց վերայ ուշք պիտի կարձնի. բայց որոց վերայ գժրաղտաբար հարուստ եսասերները շատ քիչ ուշք են դարձնում:

Այստեղ դարձեալ հարկաւոր է լինում կրկնել այն մեծ առողջապահական սկզբունքը, թէ մինչև որ քո շրջապատը առողջութեան պայմաններից զուրկ է, դու անձեռնհաս ես քո անձնական առողջութիւնը լիովին վայել:

Ուրեմն անձնական շահը պիտի զրդի հարուստ դասակարգի ներկայացուցիչներին, որ հոգս քաշեն լաւացնելու այն հողլ, որի վերայ հիմնուել է զիւղը կամ քաղաքը. նոյնպէս բնակարանների, պարտէզների և այլ պայմանների վրայ: Մեծատունը ինչպիսի առողջապահական պայմանների մէջ էլ ապրելու լինի, որքան էլ գաղափարական կատարելութեան հասցրած լինի տան ներքին պայմանները, քանի որ տան շուրջը, դուրսը հողլը ջուրը և պայմանները հակառողական են, նա չի կարող մաքուր օդ վայելել: Քիչ բան չեն նշանակում այս կողմից ընդարձակ պարտէզներն և ծառաստանները, որով շրջապատում են սովորաբար բնակարանները, և ինչ խօսք, որ ամեն անձն յատուկ ուշք պիտի դարձնի բուսականութեան բազմացնելու վրայ: Սակայն եթէ բարձրաբերձ լիռները չեն կարող բոլորովին արգելել օդի հաղորդակցութիւնը, ուր կը մնան այն մեր վերսիշեալ միջոցները: Գուցէ ընթերցողը կարգալուց յետոյ կանդ առնի և հարցնի ուրեմն... կը պատասխանենք, նախ՝ քեզ համար այնքան

թանկագին լինի սենեակիդ օդի մաքրութիւնը, որքան քո առողջութիւնը:

Երկրորդ՝ հենց զրա համար էլ անձին շորերի, սենեակի և լին կահարասեաց մաքրութիւնը ոչ թէ աւելորդ զարդ, այլ անհրաժեշտ պահանջ համարիր:

Երրորդ՝ մի կարծեր թէ միակ քեզ վերայ մտածելով կատարեալ առողջապահական պայմաններ կարող ես ստեղծել:

Չորրորդ՝ եթէ անհրաժեշտ չե, սիրել աւելի բաց օգում շրջել ու գործել քան սենեակում փակուած քնած ու թմրութեամբ ժամերդ հաշուել:

Հինգերորդ՝ եթէ մարդասիրութիւնը քեզ չի գրգում խեղճերի վիճակի վերայ մտածել, գոնէ քո անձնական առողջութիւնդ թող մղի քեզ անկարների վիճակը բարւոքել:

Սրանցով հարկաւ դու բոլորովին զերծ չես մնալ հիւանդութեանց գեպքերից, բայց հաւատացիր, որ պատճառներից ամենամեծի առաջն առել ես: Այս հանգամանքը մեր աշքում աւելի զին կը ստանայ: Եթէ ուշ դարձնենք, թէ որչափ անմատչելի է մեղ համար փոշոտ օդի ազգեցութեան հետեանքը ուղղակի նկատել սովորական կեանքում: Ուրեմն և որչափ քիչ զգուշութիւններ ենք ձեռք առնում այդ կողմից մեղ ապահովելու համար: Ցրտի, կերակրի, վատ եղանակների և լուղեցութիւնը իսկոյն նկատելի է, և մենք աւելի արթուն ենք զրանց դէմը առնելու համար: Մենք աւելի յօժար ենք մի ժամանակ ծարաւ մնալ, քան հին պղառը ու կասկածելի յատկութիւն ունեցող ջուրը խմել, ուրովհետեւ մենք աշքով տեսնում ենք, սակայն ամբողջ ժամանակ դասարանում 30—40 աշկերտաց շնչառութեամբ ապականուած օդը շատ ուսուցիչներ հօս չեն քաշում մաքրել զասամիջոցներին: Նոյնը կարելի էր ասել ամեն մի անհատի համար, որոնց յանձնուած է մի որ և է բազմամարդ ժողովարանի վերահսկողութիւնը: Խոկ զրա հետեանքն այն բոլոր մեղ համար անընթառնելի պատճառներից յառաջացած բազմութեարագ հիւանդութիւններն են, որի մի ծայրում կարելի էր գնել մարմնի ընդհանուր թուլութիւն, խոկ միւսում թոքախտը:

Ա. Յ.

